

Թ.

Հասկրցաւ կասդոն ամեն բան :
 Ճնկան վրայ եկաւ ու ճակատն հո-
 ղուն տուաւ երկայն ատեն :
 Երբոր գլուխը վեր առաւ, վալկրան
 տիկինն ու որդին ոտքի վրայ դիմացը
 կեցեր էին՝ պահապան հրեշտակնե-
 րու պէս :
 — Աստուած զինքը նորէն դարձուց
 մեզի, սիրելիս, ըստ տիկինն՝ հօրը
 գիրկը մղելով Օլիվիէն :

— Աստուած ողորմած է, պատաս-
 խանեց կասդոն .
 Եւ սրտին վրայ սղմեց տղան :
 Այսօրուան օրս կասդոն կը հաւա-
 տայ Նախախնամութեան, ըստ, և վեր-
 ջացուց Մարիոյ այս պարզ պատմու-
 թիւնը :

Յ. ՍԱՆՏՈՑ

ՅԱՂԲԻԿԻՐՆ ՎԻՎԻԼ**ՏԱՂ**

Ի քեզ յոյր յորդ սափոր այս մարդք զարդարին,
 Ամառն յերկնէ փայլեաց ի նուադ քառասուն,
 Յորմէհետէ Հարսանցդ յաւէժ սիրային
 Ըզհուսկ ետու զիմ ողջոյն :
 Նոյն զարդ գեղոյ ծաղկէ զնոքօք բարեդէպ,
 Ափունք կանաչ եւ նոյն բիւրեղ զովարար .
 Համայնածախ աւուրց վրզեան անվըրէպ
 Յիս լոկ ածեալ է խանդար :
 Վեհն իկիս, հրսկող ելիցս հաշտ ի լցու,
 Մնոյց զիս ի վայրս ոյց աղբերակնըդ տայ շուք .
 Ա՛հ, զօդն ինձ ջինջ տուր՝ որ ի տիս գեռարոյս
 Շընչեաց յիս բաստ անտաղտուկ :
 Թէ հնար ինչ գոյ, տուր կեանս եւ միտս ինձ արծարծ ,
 Զերդ ի հովիտդ այդ զովագին, քաղցը ի յուշ,
 Մէզն եւ ծաղկունք, յալեացդ համբոյր գըգուանաց
 Ամ յամ փըթթին նոր քընկոյշ :
 Բնդունայն իղձք . քաղցըիկ աւուրց սին պատկեր
 Վիշտս յաւելու ցաւոց սըրտիս տըրտմալի .
 Եղբայր իմ անդ, արբուն տիոցս իմ ընկեր
 Գայր ինձ երբեմն առ երի :
 Քայլիցս էր ցուալ . եւ մոացաթեւ խանդիւ գնայր
 Առ մըշտագուարճ մարդացս ալեօք թափառուտ .

Կընձնին զառամ, ափն եւ ալիք, դաշտ դալար
Զերգսն յեղյեղեն ինձ ծանօթ:

Երբ իմ տըկար միտքս ըսկըսան տալ բողբոջ,
Խրատուքն ըզգօն նա զիմ կըրթէր զախորժակ,
Եւ ի մատաղ ձեռո ըզբամբուանս ի դողդոջ
Ուղղաւորէր զամէն վանդ:

Ո՛չ եւս է նա . գեռ չորս հընգից էր ամաց .
Ըստ տենչանացն ըղձից՝ փառաց ակն ունէր,
Թէ գոյր կարօղ ըզթըշնամի աստեղաց
Ըզսաստ մեղկել զաննըւէր:

Սապէս պըճնեալ նորափետուր իւր թեւով
Մանրիկ սոխակն անդէն նախկինն ի նըւազ
Ըստ հայրենին ընդէլ բարուց քաղցը երգով
Զարթուցանէ զմայրեաց դանդ :

Յեղակարծում հատեալ զպայծառ ձայնն անուշ,
Տապաստ դընի անդեղն հերձեալ ճիրանաւ .
Ի՞ր հեշտանայր, ահ, թէ մադին այն չէր դուժ,
Շուրջանակի վայր բընաւ:

Չայնն ի յերկինս ելեալ ի մօտ պուրակաց,
Նախանձորդացն երգոց լինէր գեր ի վեր .
Այլ գեռածին՝ անկեալ դընի մահազգեաց
Ի խորս ամայց ապալեր:

Սիրուն եղբայր, մոռերիմ, վարժիչ եւ տիպար .
Ո՛վ քաղցը ընկեր նախկին տիոցս իմ արբուն.
Իցիւ սիրոյն գութ յանկեղծիկն իմ քընար
Յանմահս հանէր գքոյդ անուն:

Զեմ ինչ առ այլ պատիւ փառաց կաթոգի .
Սիրոյ է իղձս եւ ոչ հըպարտ պերճութեան .
Ահ, գէթ բարբառս ի գաղտ լինէր լըսելի
Ծնդ խոր շիրմիդ հանգըստեան:

Վայրկեանք ինչ եւս, եւ մահ առ քեզ ածցէ զիս .
Երբ իմ ընդ հուպ յետին աւուրց նուազի լցու,
Զեղերք աղբերն ուր երգէիր դու ընդ իս
Ցորդոր հեղից զարտասուս:

ՖՈՆԴԱՆ